

ՆԱԽԴԱՆԻ ԽՈՐՀԱՆԳՈՒԹՅԱՆԸ

Հարգելի ընկեր խմբագիր.

Ձեր ամսագրի այս տարվա № 7-ում տպագրված է Ռ. Իշխանյանի «Հայերենի տերմինաշինության հարցեր» հոդվածը, որով վերստին բանավեճ է սկսվում մեր տերմինաբանության հարցերի շուրջը:

Հայերենի գիտական տերմինաբանության հարցերի քննարկմանը, ինչքան էլ այդ տարօրինակ է, անցյալում շատ քիչ են մասնակցել բնական ու հասարակական տարբեր գիտությունների ներկայացուցիչները: Հասկանալի պատճառներով առաջին հերթին մտահոգված լինելով իրենց կոնկրետ գիտությունների առջև կանգնած խնդիրների լուծմամբ, նրանք, դժբախտաբար, քիչ են մտահոգվել հայերենի գիտական տերմինաբանության հարցերով: Բացառություն են կազմում լեզվաբանները, որոնք, մեր կարծիքով, լեզվաբանությունից բացի մյուս բոլոր կոնկրետ գիտությունների տերմինաբանության մշակման գործում մեծ անելիքներ ունեն որպես խորհրդատուներ:

Այսինքն քան 10 տարի տեղի այս բանավեճին մասնակցած ընկերների մեծ մասը, ելնելով կյանքի ու գիտության զարգացման ռեալ պահանջներից, արժարժում է այն ճիշտ միտքը, որ գիտական տերմինաշինության բնագավառում հաջողության կսրելի է հասնել միայն այն դեպքում, եթե հենց սկզբից մերժվեն ծայրահեղ սլահանքները և հախուռն մոտեցումը:

Ուսկայն այդպես չեն վարվում վիճողներից ոմանք, որոնց հոգվածներում ցայտուն կերպով դրսևորվեցին երկու, մեր համոզմամբ հավասարապես անառողջ ու վնասակար, գիտության և հայերենի գիտական տերմինաշինության զարգացմանը ոչինչ չտվող ծայրահեղություններ: Դրանցից մեկը ընդունելի է համարում հայերենի անքննադատ «հարստացումը» ուրիշ լեզուներից եկող գիտական տերմիններով ու սովորական բառերով, իսկ մյուսը, ընդհակառակը, մերժում է ամեն մի այլալեզու տերմին, որը ավանդական հայերենից չի գալիս կամ հայերեն բառերով չի արտահայտված: Եթե առաջին ծայրահեղության դրոշմը հեռավոր ապագայում ստեղծվի՞ք համաշխարհային միասնական լեզվի սխալ հասկացված տեսակետն է ու դրա հիման վրա՝ լեզուների ձուլման պրոցեսը այսօր սկսելու պահանջը, ապա երկրորդ ծայրահեղության ելակետը մաքրամոլությունն է ու դրա հիման վրա՝ մեր լեզուն «խորթ» տերմիններից անխնա բռնաթափելու հրամայական կոչը: Եթե առաջին ծայրահեղությունից «ձախության» հոտ է բուրում, ապա երկրորդը արմատապես սխալ հասկացված հայրենասիրության և վերջին հաշվով ազգային սահմանափակության արտահայտություն է: Եվ դա այդպես է անկախ այն բանից, թե այդ ծայրահեղությունների պաշտպանները գիտակցում են այդ, թե ոչ:

Գոյություն ունեցող ծայրահեղություններից առաջինի մասին շատ է զրվել ու խոսվել, շատ է խոսում նաև Ռ. Իշխանյանը իր այս հոդվածում, որտեղ ժխտվում է երկրորդ ծայրահեղության առկայությունը: Սակայն հոգվածը կարգացող ամեն մարդ, որ ազատ է կանխակալ կարծիքից, հեշտությամբ կնկատի, որ դա մաքրամոլության ականառու օրինակներից մեկն է:

Ռ. Իշխանյանը իր հոգվածում կտրուկ դատողություններ է անում հայերենի դիտական տերմինաբանության հարցերի շուրջը, նախապես անհրաժեշտորեն նույնացնելով դիտական տերմինաբանության ստեղծման ու զարգացման բնագավառի խնդիրները ընդհանուր լեզվաշինարարական հարցերի հետ: Մերժելով մեր նշած ծայրահեղություններից առաջինը, որն իր տերմինով կոչվում է «օտարաբան ուղղություն» կամ «օտարամոլություն», և ճգնելով ապացուցել երկրորդի շփոթությունը, նա իր հոգվածի վերջում, որպես եղրակաղություն, գրում է.

«...ամեն մի դիտական հասկացության ճամար նախ պետք է գտնել հայերեն անվանում..., եթե այս չի հաջողվում, հայերենի միջոցներով պետք է ստեղծել նոր անվանում..., եթե այդ էլ չի հաջողվում, պետք է փորձել օտար անվանումը ենթարկել հայերենի հնչյունաբանական կամ բառակաղմական կանոններին..., սրա հնարավորությունն էլ չլինելու դեպքում նոր միայն կարելի է օտար անվանումը նույնությամբ փոխառել..., չբացատրելով նրա հայերեն թարգմանությունը ապագայում» («Լրաբեր», 1969, № 7, էջ 102—103, ընդգծումները մերն են): Ինչպես տեսնում եք, Ռ. Իշխանյանը ևրեք անգամ կրկնում է՝ «պետք է...», զրանից հետո միայն մեծահոգաբար թույլ է տալիս՝ «կարելի է...», սակայն՝ «չբացատրելով...»:

Այս նշանակում է, որ Ռ. Իշխանյանը պահանջում է ամեն ինչ անել, ոչ մի միջոց չխնայել, միայն թե հայերենի մեջ «օտար անվանում» (այսինքն՝ այլ լեզվից եկող դիտական տերմին) չսպրդի:

Ու այս դատողությունները Ռ. Իշխանյանը հավակնում է հռչակել օրենք, որը իբր «միակ գիտական հիմքն է հայերենի տերմինաշինության համար» (էջ 103, ընդգծումները մերն են):

Մեր համոզմամբ, Ռ. Իշխանյանի ջատագոված այս սկզբունքներով դեկավարվելու դեպքում հայերենը կդառնար աշխարհից կտրված, իր պատշաճում ամփոփված մի լեզու, որը չի կամենում հաղորդակից լինել հայկական իրականությունից դուրս գտնվող աշխարհում գիտության, կուլտուրայի և հասարակական կյանքի բնագավառներում կատարվող փոփոխություններին ու առաջընթացին: Մեր շատ անվանի լեզվաբաններից մեկի խոսքերով ասած, այդպիսի մոտեցումը «կարող է կատաստրոֆիկ ազդեցություն ունենալ հայ տերմինաշինության վրա»:

Բարերախտաբար, մեր կյանքն ու գիտությունը իրենց զարգացման ընթացքում, ինչպես և պետք էր սպասել, չեն զնացել և չեն գնում գոյություն ունեցող երկու ծայրահեղություններից և ոչ մեկի ցույց տված «փրկարար» ճանապարհով: Նրանք վաղուց բնորոշ են ճիշտ ուղին, «ոսկե միջինը», որտեղ «արկ է՝ վերցնելով այլալեզու դիտական տերմինը, իսկ որտեղ պետք չէ՝ մերժելով այն: Այդպես է եղել անցյալում՝ հորինացուց ու այսպես կոչված «հունաբան դպրոցից» սկսած մինչև մեր օրերը, այդպես է հիմա և, անշուշտ, այդպես կլինի ապագայում, որովհետև լեզուների փոխադարձ հարստացումը (մանավանդ դիտական տերմինաբանության բնագավառում) օբյեկտիվ օրինաչափություն է, որը չի կախված որեւէ մեկի կամքից ու ցանկությունից:

Սովետական Հայաստանի գիտությունն ու նրա տերմինոլոգիան զարգանում են՝ մի կողմ նետելու մեր լեզվաշինարարների՝ «ձախից» ու «աջից» տրրվող հրահանգները, թույլ չտալով, որ նրանցից առաջինները դոնորը կրնկի վրա բաց անեն տարբեր լեզուներից եկող ամեն մի տերմինի առաջ և չսպա-

սելով, որ երկրորդները «դիտական տերմիններ» թխեն բիոնիկայի, կիբեռ-նետիկայի, դենետիկայի և տասնյակ հազարավոր այլ դիտական տերմինները համար՝ անխտիր:

Իր հոգիածում ԼՆ. Իշխանյանը քննադատական խոսքեր է ասում նաև մեր հասցեին:

Մենք դժգոհելու առիթ չէինք ունենա, եթե այդ քննադատությունը հիմն-ված չլիներ կեղծիքի վրա: Իսկ ԼՆ. Իշխանյանը թույլ է տվել ոչ թե մեկ, այլ երկու կեղծիք:

Իշխանյանը նախ կեղծել է մեր տեսակետը քննարկվող հարցի վերաբեր-յալ: 1963 թ. հունիսի 2-ի «Նրեկոյան Նրեան» թերթում անդրադառնալով հա-յերենի գիտական տերմինաբանության հարցին, մենք, որպես եզրակացու-թյուն, գրել ենք ու ընդգծել, որ լեզվի հարստացման և դիտության զարգաց-ման շահերը թելադրում են ուրիշ լեզուներից եկող դիտական տերմինները թող-նել անփոփոխ, «եթե հայերենում համապատասխան բառ չկա, եթե տերմինը քաբզմանել հնարավոր է, բայց ստացված քաբզմանական տերմինը չի տալիս բառի իսկական իմաստը, եթե օտար լեզվից վերցրած տերմինը արդեն տա-րածվել է լեզվի մեջ և ոչ մի իմաստ չկա այն վտխելու»: Ու ապա ավելացրել ենք՝ կարծես թե կանխագուշակելով ԼՆ. Իշխանյանի այս հոգիածի երևան գա-լու հնարավորությունը. «Տերմինաշինության, մասնավորապես այլ լեզուներից եկող տերմինները թարգմանել — չթարգմանելու (ավելի ճիշտ՝ նույնությամբ ընդունելու կամ նույնանիշ բառ դնելու) հարցը բարդ և նուրբ հարց է: Ինչն լուծելու ժամանակ չի կարելի ոչ պլուրիստների տեսակետի վրա կանգնել՝ մեր-ժելով ամեն մի օտարլեզվյա տերմին, ոչ էլ լեզուն հախուռն կերպով լցնել այդպիսի տերմիններով՝ նույնիսկ այն դեպքում, երբ տվյալ լեզվում կա վա-ղուց ընդունված ու հասկանալի տերմին: Բոլոր դեպքերում էլ, մեր կարծիքով, պետք է զգույշ լինել և ծայրահեղությունների մեջ չընկնել»:

Ընթերցողներից թաքցնելով մեր այս պարզ ու հստակորեն արտահայտ-ված մտքերը, ԼՆ. Իշխանյանը առանց որևէ հիմքի մեկ համարում է «օտարա-բանությունների հետեղական պաշտպան» («Լրաբեր», էջ 92):

ԼՆ. Իշխանյանի երկրորդ կեղծիքը այն է, որ նա, դարձյալ գիտակցաբար (ու, ըստ երևույթին, ինչ-որ հեռու գնացող անմաքուր նպատակներով), ըն-թերցողներից թաքցրել է, որ «Նրեկոյան Նրեան»-ի այդ համարում տպագրված հոգիածի երկու հեղինակ ունի, որոնցից երկրորդը տողերիս գրողն է, իսկ առաջինը՝ ակադեմիկոս Լևոն Հովհաննիսյանը: ԼՆ. Իշխանյանը իր հոգիածի վերոհիշյալ էջում գրում է. «...օտարաբանությունների հետեղական պաշտ-պաններից մեկը՝ ԼՆ. Ոսկանյանը Գիտական տերմինաբանության հարցի շուրջը» հոգիածում ...պնդում էր, թե...» և այլն:

ԼՆ. Իշխանյանի դրչի մի հարվածով Ոսկանյանի հետ միասին «օտարա-բանությունների հետեղական պաշտպան» է դարձել նաև ակադ. Լ. Հովհան-նիսյանը, որը տասնամյակների իր բաղմաբեղուն գործունեության շատ տա-րիներ նվիրել է նաև հայերենի բժշկական տերմիններ ու բառարան ստեղծելու ծանր ու շնորհակալ գործին:

Ահա թե ինչպիսի անընդունելի միջոցների է դիմել ԼՆ. Իշխանյանը իր ոչ գիտական տեսակետները անցկացնելու համար: